



Գործ ԵԿԴ 0510/02/13
2013թվ.

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր
իրավասության դատարանը**

հետևյալ կազմով

*Նախագահությամբ
դատավոր
քարտուղարությամբ*

**Ռ. Ներսիսյանի
Կ. Մանուկյանի**

2013թ. հունիսի 28-ին, դռնբաց դատական նիստում, դատարանում քննեց քաղաքացիական գործն ըստ հայցի «Էներգոտեխնիկա» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ Ջրային տնտեսության պետական կոմիտեի, «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲ ընկերության, Գերմանական KFW բանկի, Շիրակի մարզպետարանի, ՀՀ Ֆինանսների նախարարության՝ առաջին գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին

Դատաքննությամբ դատարանը պարզեց հետևյալը.

Հայցվորը դիմել է դատարան՝ առաջին գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջով:

Գրավոր դիմում ներկայացնելով հայցվորը հայտնել է, որ հրաժարվում է ներկայացված հայցից և խնդրել է գործի վարույթը կարճել:

Ուսումնասիրելով գործի նյութերը և ներկայացված դիմումը, դատարանը գտավ, որ այն ենթակա է բավարարման, քանի որ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդ. 6-րդ կետի, դատարանը կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109, 110, 128, 130-132 հոդ. դատարանը


Վ Ճ Ո Ե Ց

Քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի «Էներգոտեխնիկա» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ Ջրային տնտեսության պետական կոմիտեի, «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲ ընկերության, Գերմանական KFW բանկի, Շիրակի մարզպետարանի, ՀՀ Ֆինանսների նախարարության՝ առաջին գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին՝ կարճել:

Պետական տուրքի հարցը համարել է անտեղի:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանին հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում և օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

Դատավոր՝



Ռ. Ներսիսյան